Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/6324/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ
գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին

05 ապրիլի 2023 թվական **քաղաք Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Հ. Ջալալյանի (այսուհետ նաև՝ Դատարան), քննության առնելով թիվ ԵԴ/6324/02/23 քաղաքացիական գործով պատասխանող Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Հ. Բաղդասարյանի միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑ

Դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԴ/6324/02/23 քաղաքացիական գործն ըստ հայցի «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.02.2023 թվականին կայացված «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերությանը «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասով թիվ 2 որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք «ՈՒԱՆՔԼԻՔ» ՍՊ ընկերության հայտը մերժելու, «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու և այդ մասով պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

30.03.2023 թվականին պատասխանող Երևանի քաղաքապետարանի կողմից պայմանագրի կատարման կասեցումը վերացնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Դատարան: Միջնորդությունը Դատարանում մուտքագրվել է 30.03.2023 թվականին, դատավորի աշխատակազմին հանձնվել՝ 31.03.2023 թվականին:

Պատասխանողի ներկայացուցիչը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ներկայացված միջնորդությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար 25.01.2023 թվականին «Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ: «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Լոկատոր» ՓԲ ընկերությունը և «Ուանքլիք» ՍՊ ընկերությունը: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ երկու մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար, սակայն գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել «Ուանքլիք» ՍՊ ընկերությունը որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից: Երևանի քաղաքապետարանի և «Ուանքլիք» ՍՊ ընկերության միջև կնքվել է ծառայությունների գնման պայմանագիր:

Նշել է, որ համաձայն նշված պայմանագրի անբաժանելի մաս կազմող տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցի՝ պայմանագրով սահմանված ծառայության մատուցումը ներառում է լուսացույցների ցերեկային տեսանելիության ստուգում ճանապարհից կամ ավտոմոբիլից յուրաքանչյուր 10 օրը մեկ անգամ, լուսացույցների ցուցմունքների ճշգրիտ փոփոխման (թույլատրող-արգելող-թույլատրող) ստուգում ամիսն առնվազն մեկ անգամ, լուսացույցների աշխատանքային ցիկլի (պարբերության) սահմանվածին համապատասխանության ստուգում ամիսը մեկ անգամ և կառավարման սարքի փոխարինման ժամանակ, ըստ անհրաժեշտության պատվիրատուի առաջարկությամբ լուսացուցային ռեժիմի փոփոխություն, գլխավոր ճանապարհների վրա երկկողմանի ուղղությամբ տեղադրված լուսացույցների և արագության ցուցանակների ցերեկային տեսանելիության ստուգում ամիսը մեկ անգամ, լուսացույցների կարմիր և կանաչ գույների լուսավորման սարքերի ստուգում և փոխարինում յուրաքանչյուր 30 օրը լրանալուց հետո, լուսացույցների լամպերի լարման չափում լամպերի փոխարինման ժամանակ, լուսացույցների լուսացրիչների մաքրում տարեկան մեկ անգամ, լուսացույցների գլխիկների և կառավարման սարքատուփի մաքրում և ստուգում երեք ամսվա ընթացքում մեկ անգամ, արագության և հետադարձ հաշվարկի թվատախտակների ներսի մասերի մաքրում և ստուգում, հպակների ամրացում, ապակիների մաքրում երեք ամսվա ընթացքում մեկ անգամ, արագության և հետադարձ հաշվարկի թվատախտակների ազդանշանների ստուգում տարին երկու անգամ, արագության և հետադարձ հաշվարկի թվատախտակների խորշերի մաքրում, լամպերի փոխարինում, ստուգում և կարգի բերում տարին մեկ անգամ, արագության և հետադարձ հաշվարկի թվատախտակների վերանորոգում, լուսացույցների, կանգնակների և հենասյուների /կոնսոլ/ փոշեներկում տարին մեկ անգամ կամ ներկանյութով ներկում, որը պետք է իրականացնի ժանգի փոխակերպիչի, հիմքի և վերջնական դեկորատիվ ծածկույթի դեր, կառավարման սարքերի աշխատունակության ստուգում երեք ամիսը մեկ անգամ, կառավարման սարքերի արտաքին և ներքին զննում ամսական մեկ անգամ, կառավարման սարքերի լրիվ տեխնիկական սպասարկում երեք ամիսը մեկ անգամ, մալուխային միացումների և միացման արկղերի ստուգում տարեկան առնվազն երկու անգամ (գարնանը, աշնանը), վերահսկիչ (ստուգիչ) մալուխի ջիղերի դիմադրության էլեկտրական չափումներ երեք ամիսը մեկ անգամ, մալուխային ուղեգծերի զննում ամսական մեկ անգամ, մետաղաճոպանային տնտեսության ստուգում տարեկան առնվազն երկու անգամ (գարնանը, աշնանը), ներանցիչ-բաշխիչ վահանակների, ապահովիչ կցորդների, բոլոր տեսակի ուղղիչների ամենօրյա զննում, անջատոցների, փոխարկիչների, չափիչ սարքերի, ուժային վահանների ստուգում, դրանց մաքրում և կարգի բերում ամսական մեկ անգամ, բոլոր հողանցումների դիմադրությունների չափում տարեկան առնվազն մեկ անգամ, պաշտպանական միջոցների և գործիքների ստուգում սահմանված ժամկետներում, վթարված լուսացույցերի, լամպերի և լուսադիոդների, թարթիչ բլոկների, լուսացույցային մոդուլների, սնուցման բլոկների, տրանսֆորմատորների, ավտոմատ ապահովիչների, մարտկոցների, պրոցեսորների, մալուխների, հսկիչ սարքավորումների, կանգնակների, հենասյուների, ճոպանների վերանորոգում կամ փոխարինում սահմանված ժամկետներում (մինչև 3 օրացուցային օր), ունենալ 24/7 սպասարկման կենտրոն՝ կահավորված հեռակառավարվող լուսացույցների մոնիտորինգի, ծրագրային սպասարկման և ավտոմատ կառավարման համար նախատեսված տեխնիկաներով, գործող «Streettraffic» համակարգի միջոցով հեռակառավարվող լուսացույցային օբյեկտների ծրագրային սպասարկում կամ նոր համակարգի ներդրում և առկա «Streettraffic» համակարգով աշխատող օբյեկտների միացում նոր ներդրված համակարգին, առկա տրանսպորտային և հետիոտնային լուսացույցերի տեղափոխում առկա կանգնակի վրա, ամրացում համապատասխան դենալներով,

լոաացուցային համակարգի բնականոն աշխատունակության ապահովման հետ կապված առանձին մասերի և հանգույցների մաքրման աշխատանքների իրականացում, թվատախտակի փոխարինում կամ կարգաբերում, հետհաշվարկի թվատախտակի փոխարինում, կարգաբերում, հսկիչ սարքի փոխարինում, սնուցման աղբյուրի փոխարինում, հետիոտնային կանչի կոճակի փոխարինում, հետիոտնային անցման կենտրոնական հսկիչի վերանորոգում, վնասված մալուխների փոխարինում, վնասված ապակու փոխարինում, լուսացույցի ծրագրային ապահովման վերականգնում, հետիոտնային անցման կենտրոնական հսկիչի ծրագրային ապահովման վերականգնում, կատարված աշխատանքների տեսաձայնագրում և տրամադրում պատվիրատուին:

Պատասխանողի ներկայացուցիչը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ՀՀ սահմանադրության 3-րդ, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածը, հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Ուանքլիք» ՍՊ ընկերության միջև կնքված պայմանագրի անբաժանելի մաս կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց բաժնում արտացոլված են այնպիսի աշխատանքների կատարում և վերահսկում, որոնք ուղղակի կապված են հանրային շահի, հետևաբար նաև հասարակության կյանքի և առողջության ապահովման պահպանման հետ:

Հաշվի առնելով, որ կողմերի միջև կնքված պայմանագրի համաձայն իրականացվելու են վերոնշյալ աշխատանքները, որոնք ուղղակի ծառայելու են հասարակության բնականոն կյանքի, ապահով երթևեկության, մարդկանց կյանքի և առողջության պահպանմանը, ինչպես նաև հասարակության ապագա հանդիսացող երեխաների կյանքի, ազատ, ապահով տեղաշարժվելու պահպանմանը, նշել է, որ վերջիններիս ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների՝ «երեխայի լավագույն շահ» սահմանադրաիրավական կարգավիճակի ապահովման իրավունքը գերակա է հայցվոր ընկերության առևտրային շահի նկատմամբ և որ տնտեսական գործունեություն իրականացնելու շրջանակներում մասնավոր իրավունքի պաշտպանությունը չի կարող այնպիսի բացասական հետևանք առաջացնել, որը կհանգեցնի առավել արժեքավոր շահի ոտնահարմանը կամ հանրային իրավունքի դաշտում շահառու հանդիսացող վարորդների, բնակիչների, այդ թվում նաև մանկահասակ երեխաների ազատ և ապահով տեղաշարժմանը:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ առաջնայնություն տալով հասարակության շահերի առավել ապահովմանը, բնակչության ազատ և ապահով տեղաշարժմանը, Երևանի տարածքում ճանապարհային ամենօրյա ապահով երթևեկության ապահովմանը, բազմաթիվ ավտոճանապարհային դժբախտ պատահարներից խուսափելու և դրանով իսկ պայմանավորված մարդկային կորուստները կանխելու, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման կանոնները ծանր վնաս պատճառելու վտանգը նվազագույնի հասցնելու հանգամանքները, ինչպես նաև տվյալ իրավահարաբերությունների համատեքստում Երևան համայնքի ղեկավարի օրենքով պարտադիր և պատվիրակված պարտականությունների կատարումը ապահովելու անհրաժեշտությունից ելնելով (որը բխում է հանրայի շահի ապահովման)՝ խնդրել է վերացնել օրենքի ուժով առաջացած պայմանագրի կատարման կասեցումը:

Դատարանն, ուսումնասիրելով միջնորդությունը և կից ներկայացված փաստաթղթերը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-

րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, դատարանը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մարմինների ղեկավարների, իսկ իրավաբանական անձանց դեպքում գործադիր մարմնի ղեկավարի գրավոր միջնորդության հիման վրա կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին որոշում: Դատարանը սույն մասով նախատեսված որոշումը դրա կայացման օրն անհապաղ ուղարկում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինն այդ որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում:

Վերը նշված իրավանորմից հետևում է, որ այն դեպքում, երբ առկա է հանրային կամ պաշտպանության, ազգային անվտանգության շահ, որից ելնելով անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, Դատարանը կողմի գրավոր միջնորդության հիման վրա, որոշում է կայացնում է գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին:

Հաշվի առնելով, որ պատասխանողի կողմից ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագրով սահմանված որոշ ծառայություններ ենթակա են մատուցման տասն օրը մեկ անգամ, ամիսը մեկ անգամ, ինչպես նաև հաշվի առնելով նշված ծառայությունների բնույթը և կարևորությունը, Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը, քանի որ առկա է հանրային շահ՝ պայմանավորված բնակչության ազատ և ապահով տեղաշարժման, Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության բնականոն ապահովման, ինչպես նաև ավտոճանապարհային դժբախտ պատահարներից խուսափելու անհրաժեշտությամբ: Ուստի, ելնելով վերոնշյալ նորմի տրամաբանությունից, Դատարանը գտնում է, որ պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը հիմնավոր է և պետք է վերացնել օրենքի ուժով առաջացած գնման գործընթացի կասեցումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ, 200-րդ, 234.11-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Պատասխանող Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի միջնորդությունը բավարարել:
2. Վերացնել Երևանի քաղաքապետարանի կողմից «Երևան քաղաքում լուսազդանշանների պահպանման և սպասարկման ծառայությունների» ձեռքբերման նպատակով 25.01.2023 թվականին հայտարարված թիվ «ԵՔ-ՀԲՄԾՁԲ-23/2» ընթացակարգային ծածկագրով գնման գործընթացի կասեցումը:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման :

ԴԱՏԱՎՈՐ՝ **Հ. ՋԱԼԱԼՅԱՆ**